



Երևան, 19 Դեկտեմբեր, 2011

ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, գուր ինձ իմասպութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՍՈՍ 9

ԳՈՀՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԻՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամբողջ պրպովս գոհութիւն այիսի մաքուցանեմ քեզի, Տէր,
եւ քու բոլոր սքանչելի գործերդ այիսի թուեմ:

Քեզմով պիտի ուրախանամ ու ցնծամ,
եւ ներքողեմ քու անունդ, ո՞վ Բարձրեալ:

Տէրը ինք ապաւէն պիտի ըլլայ անիրաւուածին,
ապասպան պիտի ըլլայ նեղութեան ժամանակներուն:
Անոնք որ քեզ կը ճանչնան, ո՞վ Տէր, քեզի պիտի վսպահին,
որովհեփեւ դուն չես լքեր անոնք որոնք քեզի կը դիմեն:
Ներքող երգեցէք Տիրոջ, որ Սիոն կը բնակի,
բոլոր ազգերուն մէջ պարմեցէք անոր գործերը.

Որովհեփեւ ան՝ որ բոլոր ոճիրներուն համար հաշիւ կը պահանջէ՝
յիշեց փառապողները, չմոռցաւ անոնց աղաղակը:

Ողորմէ ինծի, Տէր,
դեն թէ ի՞նչ խեղճ վիճակի մաքնուեցայ թշնամիներուս կողմէ,
դուն՝ որ զիս մահուան իշխանութենէն դուրս բերիր,
որպէսզի քու գործերուդ օրիներգութիւնը կապարեմ՝
Սիոն քաղաքին մէջ, քու ժողովուրդիդ դիմաց,
եւ պարզեւած փրկութեամբդ ցնծամ:

ՃԱՐԱԿԱՆ-ԱՊՈՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, առու աշխաձիս խաղաղութիւն:

Եւ Հիանագաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեղ ողորմեա:

ԱՊՈՔ

Տէր, դուն՝ որ մեր ցաւերը կը բժշկես,
սրբաբեկները կ'առողջացնես, նեղեալները կը հանդարփեցնես,
կապուածները կ'արձակես, սպաւորները կը միսիթարես,
անյոյսներուն յոյս կու փաս, խոռվածներուն՝ հանգիստ,

եւ յոգնածները նաւահանգիստ կը հասցնես,

դուն՝ որ սիրով կը նայիս քու արարածներուդ

եւ քու քաղցրութեաբդ կը կերակրես բոլորը,

մեզ ալ միսիթարէ ու կերակրէ, ու մեր բոլորի ցաւերը բժշկէ

եւ մեզ հասցուր յաւիտենական կեանքի ժառանգութեան: Ամէն:

ՕՐՈՒՅՆ ՆԻՒԹ
ԱԲԵՏԱՐԱԿՆ ՀԱՍ ՄԱՍԹ-ԷՌՈՒ
Գլխ. 15:29-39

ՅԻՍՈՒՄ ՇԱՏԵՐ ԿԸ ԲԺՇԿԵ (15.29-31)

- Քրիստոս պատրաստ է երկար ճամբորութիւններ կարարելու որպեսզի բժշկէ: «Ես չեկայ առողջներուն համար, այլ՝ հիւանդներուն»: Որովհետեւ Ան գիտէ հոգիին արժեքը:
- «Լեռ ելելով՝ հոն նսպաս», որպեսզի բոլորը զինք փեսնեն եւ իրեն գան: «Ոչ ոք ճրագը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, զայն աշխանակի վրայ կը դնէ, որպեսզի փունին մէջ գրնուողներուն լոյս տայ» (Մաքր 5:15):
- Ահաւասիկ Քրիստոս պատրաստ է բոլորը բժշկելու, հոգ չէ թէ բազմութիւն է. հոգ չէ թէ բարբեր դրեսակի հիւանդութիւններ են: Այնքան արեն որ հաւագրով կը դիմենք Իրեն, Ինք պատրաստ է մեր բոլորի ցաւերը իր վրայ առնելու եւ մեզի համգիստ շնորհելու:
- Այսօր ալ կրնայ ըլլալ, որ ֆիզիքապէս կադ, կոյր, համր կամ հաշմանդամ չենք, եւ չունինք ֆիզիքական այլ հիւանդութիւններ, սակայն մեղքը կրնայ պարած ըլլալ մեր հոգին, շեղած կրնանք ըլլալ Տիրոջ ճանապարհէն, կուրցած մեր սիրքն ու միքքը՝ չկարենալ փեսնելու համար Տիրոջ լոյսը. փակած մեր բերանները՝ չկարենալ պարմելու համար Տիրոջ սքանչելիքները: Հեգեւաբար, եկէք մենք զմենք Տիրոջ ովքերուն առջեւ դնենք եւ Յիսուս ամբողջովին եւ առանց հարցուփորձի՝ կարարելապէս պիտի բժշկէ մեզ բոլոր:
- Ահաւասիկ, բժշկուողները իրեաններն չեն, այլ՝ հեթանոսներ: Եւ ահա կ'իրականանայ Եսայի մարգարէի կողմէ ըսուած խօսքը. «Այն արեն կոյրերուն աչքերը պիտի բացուին, եւ խուլերուն ականջները պիտի բացուին: Այն արեն կադը եղջերուի պէս պիտի ոսպնու, ու համրին լեզուն պիտի օրիններգէ» (Ես 35:5-6):
- Ի դես այս բոլորին ներկանները «կը փառաւորէին Խրայէի Ասպուածը»: Հրաշքի մը կարարումը փառաւորման առիթ պէտք է հանդիսանայ բոլորին համար, եւ ողորմութիւնը, որ հոգինները կ'ուրախացնէ՝ զԱսպուած զոհաբանելու առիթ:

ՉՈՐՍ ՀԱԶԱՐԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ (15.32-39)

- Մէկ այլ ուրիշ դէպք կապուած կերակրումի: Առաջինի պարագային հինգ հազար հոգիններ կը հաշուէր, իսկ հիմա չորս հազար:
- Անցեալ դրուագի պարագային, ուլողները մեծ մասամբ իրեաններ էին, իսկ այս պարագային մեծ մասամբ՝ հեթանոսներ:
- Առաջին իսկ արդայայգութիւնը Քրիստոս կը գթայ ներկաններուն վրայ: Ցոյց կու տայ Քրիստոսի սէրը հանդէս մարդ արարածին:
- Նախքան հրաշք զործելը՝ Յիսուս իր նպագակը, ծրագիրը կը յայգնէ առաքելներուն, իրենց ալ իր Ասպուածային գութին փեղեակ ու մասնակից կը դարձնէ: Եւ ասիկա կ'ընէ, ոչ թէ որպեսզի անոնք Յիսուսի իրենց խրագը կամ գաղափարը տան, այլ որպեսզի անոնց սորվեցնէ ու փոխանցէ նոյն այն սէրը՝ որ ինք ունի մարդոց նկարմամբ: Եւ Յիսուս անոնց ծառայ չի կոչէր, «որովհետեւ ծառան չի գիտեր թէ ինչ կ'ընէ իր քերը. այլ՝ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի՝ ձեզի յայնեցի» (Յի 15:15):
- Առաջին հերթին մենք նախ փնտռենք Ասպուծոյ խօսքը եւ արքայութեան հագուցումը, Ասպուած մնացեալ միւս կարիքները աւելիով պիտի տայ մեզի (6.33):
- Աշակերպները, անապատ, անբնակ գրեղ ըլլալով, եւ նաեւ բազմութիւնը դրեսնելով, մրտահոգուած էին ու կը հարցնէին՝ «Հիմա ամայի այս վայրին մէջ ուրկէ՝ այսչափ բազմութիւն կշփացնելու չափ հաց գրնենք»: Մովսէս ալ անցեալին, ի դես ժողովուրդի բազմութեան, Ասպուծոյ հարցուցած էր՝ «Անոնց բաւելու համար՝ միթէ բոլոր ոչխարիններն ու արջատները պիտի մորթուին. կամ ծովուն բոլոր ծուկերը պիտի հաւաքուին՝ անոնց բաւելու համար» (Թր 11.12): Իսկ Ասպուած կը պարախաններ անոր ըսկով՝ «Միթէ Տիրոջ ձեռքը գրկարացա՞ւ» (Թր 11.23): Մենք ալ այսօր յաճախ կը յուսահագինք, կը յանձնուինք, երբ դժուար կացութիւններու դէմ յանդիման կը գրնուինք: Աշակերպներուն նման յաճախ մենք ալ կը մոռնանք Ասպուծոյ նախախնամութիւնը եւ անցեալին մէջ Ասպուծոյ մեզի կարարած հրաշքներն ու բարիքները: